

# ՏԱԳՆԱՊՆԵՐ...

*Posted on April 10, 2022 by Keghart*



Category: [Opinions](#)



**Սամվել Խալաթյան, Երևան, 2 Ապրիլ 2022**

Վաղուց, շահտ վաղուցվանից, մի կանխագագացում կա մեջս, իբրև՝ կանխագագացումներս կատարվում են: Այդ միտքը նախկինում ինձ թւեր էր տալիս, ուրախանում, անգամ հպարտանում էի: Հիմա տագնապ կա դրանից, մեծ տագնապ, որ Աստված մի արասցե, որ կանխագագացումներս իրականությունն դառնան:

- Այդ տագնապը հայի տեսք ունի՝ ծախված, լպիրշ, դավող, անգրագետ, պժգելի:
- Թուրքի տեսք ունի՝ ձեռքերին չցամաքող արյուն, մարդ չդարձած երկոտանու:
- Ռուսի տեսք ունի՝ շահամուլ, մեծապետական, դրուժան:
- Եվրոպացու տեսք ունի՝ անտարբեր, անհաստատ, վեհանձն:
- Ամերիկացու տեսք ունի՝ հար ոսկու տենդի մեջ:
- Մի բուռ հողի վրա մի բուռ ժողովուրդ՝ տագնապների մեջ:
- Սոցիալական ցանցերում գույժերի ժխոր է.

*«Չորքերը հայելային հետ քաշելու» Կառավարության առաջարկը կործանարար է Հայաստանի ու Արցախի անվտանգության համար»...*

*«Շուկայում հայտնվում են անորակ դեղամիջոցներ»...*

*«Գազի սակագինը բարձրացավ 4.7 դրամով»...*

*«Երկար ժամանակով լույս չի լինելու Երևանում և մարզերում»...*

*«Ադրբեջանը ոչնչացնում է Փառուխի ու Քարազիխի հայկական մշակութային ժառանգությունը»...*

*«Ազատամարտիկի տղան 4 մլն դրամ կաշառք է տվել՝ բնակարանային պայմանները բարելավելու համար»...*

*«Վանաձորի ավազանու ընտրություններում հաղթած դաշինքի ղեկավարին՝ Մամիկոն Ասլանյանին անազատության մեջ պահելով և ընտրված ավազանու նիստերն արգելելով՝ գործող իշխանությունները փաստացի քառս են ստեղծել հանրապետության երրորդ քաղաքում»...*

*«Ադրբեջանական հանցավոր գործողությունների հետևանքով խաթարվել է Խրամորթ և Փառուխ համայնքների բնականոն կյանքը, որի հետևանքով տուժել են ավելի քան 400 անձինք, այդ թվում կանայք, երեխաներ, տարեցներ»...*

*«Թշնամին հերթական ստոր ու անմարդկային քայլին է դիմում՝ ոչ միայն անարգելով հայերի գերեզմանները, այլև մահացածների ոսկորներն օգտագործելով իրենց կեղծ թեզերն առաջ տանելու համար ... հայկական կողմում քար-լուռություն է»...*

*«Ձերբակալվել է ԱԻ նախարար, գեներալ-մայոր, Հայաստանի ազգային հերոս Անդրանիկ Փիլոյանը»...*

*«Ադրբեջանի գիւլված ուժերի կողմից կիրառված Բայրաքթար տիպի ԱԹՍ-ների հարվածների հետևանքով հայկական կողմն ունի վիրավորներ և 3 զոհ»...*

*«Այս իշխանությունը պատրաստ է Արցախը թողնել Ադրբեջանի կազմում»...*

Այսպես և նմանօրինակ՝ ամեն օր, ամեն ժամ, որ փլվում են ծանր վիճակում մաքառող մարդկանց գլխին, քայքայում նյարդերը, հուսալքության մատնում նրանց:

Իսկ ինչո՞վ է զբաղված «հարազատ» կառավարությունը: Նա դեռևս հավատացնում է, թե՛ «Ապագա կա» և իրականությունից վերացած, գոհունակ, նոր օրենքների նախագծեր է հասցեագրում Ազգային ժողովի մեծամասնություն կազմող կուսակիցներին, ովքեր զարմանալի մեծ ավյունով, հայրենասիրական պաթոսով քննարկում են դրանք՝ հասարակական սննդի օբյեկտներում աղաման դնել-չդնելու, բացօթյա վայրերում ծխել-չծխելու, պոլիէթիլային տոպրակներ օգտագործելու-չօգտագործելու, վայրի կենդանիներին կրկեսում պահել-չպահելու, սնդիկով շերմաչափերն արգելել-չարգելելու հարցերը...

«Բայց սա խելագարություն է», - կասի յուրաքանչյուր նորմալ, տրամաբանող մարդ: Սակայն, այդ ո՞ր հոգեկան հիվանդն է ընդունում իր խելագար լինելը:

Այս վիճակն այն աստիճանի անհեթեթության է հասել, որ ոմանք, կայքերում և իրենց ֆեյսբուքյան էջերում, սկսել են հանրահռչակել ոմն «աստղաբան-գուշակի», ով ներքին և արտաքին իրադրության շիկացման ժամանակ երևակվում է և հուսադրում, թե՛ աստղերը հուշում են, որ Հայաստանի վիճակն անհամեմատ բարվոք և երջանիկ է լինելու... Եկող տարի: Սույն տիկինը, երբ զգաց, որ մարդկանց տազնապետներն արդեն վերաբերում են ոչ միայն իրենց լավ-վատ ապրելուն, այլև երկիրը կորցնելու վտանգին, որ նույնիսկ յուրայիններից ոմանք արդեն կասկածի տակ են դնում «իմաստուն վարչապետի» վարած քաղաքականությունը, շտապեց հայտնել, որ... վարչապետին թուղթուղի էն արել: Ողբերգական զավեշտ, այլ անուն տալ չես կարող:

Ես խորապես չեմ ճանաչում կալանավորված նախարար, ազգային հերոս Անդրանիկ Փիլոյանին և ըստ ամենայնի տեղյակ չեմ ոչ նրա հերոսության և ոչ էլ մեղքի չափից: Բայց մի միտք հանգիստ չի տալիս ինձ. եթե երկիրդ հուսալիորեն պաշտպանված է, հաստատորեն գործում են ժողովրդավարական օրենքները և կառավարության որևէ անդամ կաշառակերությամբ է զբաղվել, ուրեմն նա տառապել է հարստանալու տենդով: Սակայն, երբ թշնամին անարգել եկիրդ է մտել, աղքատությունը մեծ չափերի է հասել, գործազրկություն է և ապագան անորոշ, կառավարության անդամի կամ պաշտոնյայի հարստանալու տենչը կարող է սոսկ մեն-մի պատճառ ունենալ՝ նա համոզված է, ուրեմն, որ երկիրը կործանվում է և ձգտում է օր առաջ նյութապես ապահովել իրեն՝ խորտակվող նավից փախչելու համար: Կա՞ երկրորդ կարծիք, հաճույքով կլսեմ՝ գոնե ինքս ինձ մխիթարելու համար:

Հետհեղափոխական Հայաստանում ուժային, դատական մարմինները հետզհետե վեր

են անվում հանրության ընդդրումներն ու ազատ կամքի դրսևորումը զսպող մահակների, իսկ պաշտպանական բանակում կատարվում են այնպիսի «բարենորոգումներ», որոնք հատկապե՛ս բանակում չպետք է կատարվեին:

Վերջին երեք տարում ավելի քան 10 փոփոխություն է կատարվել գինված ուժերի բարձրագույն հրամկազմում, մեկ ամսից ավելի է բանակը ՉՈՒ շտաբի պետ չունի , պաշտպանության նախարարը ռազմական գործի մասնագետ չէ և դեռ շարունակվում է երկրի պաշտպանական պատերազմներում իրենց լավագույնս դրսևորած հրամանատարներին յուրային-ոչ յուրայինի արշինով գնահատելն ու առկա են արհեստավարժներին գործից մեկուսացնելու բազմաթիվ դեպքերն ու վտանգը:

Վերջերս, հանրությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, տեղ-տեղ, իր վստահությունը վերապահեց ոչ իշխանական ուժի թեկնածուների՝ ի դեմս Վարդենիս, Գորիս , Փարաքար, Թալին, Վանաձոր համայնքների, որտեղ ընդդիմությունը եթե ոչ հաղթել, ապա ձայնային մեծամասնություն է արձանագրել: Սա լուրջ ահագանգ դիտվեց իշխողների համար և Ազգային ժողովում շտապեցին օրենք ընդունել՝ վարչապետին օժտելով այս ու այն դեպքերում համայնքապետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու լիազորությամբ: Թե ի՞նչ են իրենցից ներկայացնում «այս ու այն դեպքերը» և ինչո՞վ են դրանք ավարտվում հանրահայտ է, չմանրամասնենք: Այսպիսով, իշխանությունն արդեն լուրջ քայլեր է անում յուրացնելու նաև ժողովրդավարական հիմունքներով կազմավորվող տեղական ինքնակառավարումը, դրանով լուրջ հարված հասցնելով արդեն իսկ բազմաթիվ կողմերից վտանգված ժողովրդավարությանը:

Մինչդեռ, սթափ տրամաբանությունը հուշում է, որ այս պայմաններում ամենահրատապն ու առաջնայինը բանակի վերազինումն է, նրա բարոյահոգեբանական ոգին ամրապնդելը, տնտեսավարման, ազգային մշակույթի և կարգ ու կանոնի պահպանման օրենքների ընդունումն ու անշեղ իրականացումը, դիվանագիտական կազմը հմուտ բանիմաց կադրերով ապահովելը... Չուր հույսեր...

Ժամանակի հետ ավելի պարզորոշ է զգացվում, որ իշխող կուսակցությունից հիասթափվածներն ու ընդդիմադիր ուժերից որոշներ, երկրի փրկության երրորդ ուժ են փնտրում: Բայց այստեղ էլ է ի հայտ գալիս զուտ հայկական երևույթը՝ ոմանք փրկարար են համարում ԱՄՆ-ին, ոմանց համար դա Եվրոպան է, մյուսների համար՝ Ռուսաստանի Դաշնությունը, և նույնիսկ՝ Իրանը:

Քչերը, անհամեմատ քչերն են, որ ձեռքը փրփուրներին զցելու փոխարեն, գիտակցում են, որ **մեր փրկությունն ու հարատևման երաշխիքը ողջ ազգի՝ սփյուռքի և հայաստանցիների հավաքականության և միաբանության մեջ է:**

Միաբանությամբ հաղթանակելու բազմաթիվ օրինակներ կարելի է հիշել մեր պատմությունից, բայց մեր հիշողությունն էլ է կարծես մթազնել՝ տեղի տալով միայն



**There are no comments yet.**